

նակարանը ու այնտեղ կը յօրինէ Գովաբանութիւն Տնօրինական Տեղեաց յերուսաղեմ 40 տաղերէ բաղկացեալ գրքոյկը, զոր 1677ին ի Կ. Պոլիս իր սեպհական տպարանէն առանձին տետրակով (35 էջ) լոյս ընծայեց, զարդարուած 15 պատկերներով<sup>(1)</sup>:

Սոսեւով այդ տպարանի մասին՝ Տոքթ. Թորգոմեան կը գրէ. «Յաւալի է ըսել որ շատ կարճատե եղած է. անոր այս խիստ գնահատելի ձեռնարկը, չի գիտցուիր ի՞նչ պատճառաւ, վաղորդայնի մը կեանք ունեցած է»<sup>(2)</sup>: Լ. Ն. Ակինեան ևս կը գրէ. «Ինչո՞ւ այնպէս շուտ ետ կեցաւ ձեռնարկութեան: Այս մասին կը պակսի ամէն տեղեկութիւն»<sup>(3)</sup>:

Այդ տպարանը, ինչպէս կ'երեւի, Ապրոյ Չէլէպիի հովանաւորութեամբ ու նպաստով հիմնուած էր, բայց անիկա փոխանակ շահարեր ձեռնարկ մը ըլլալու, ընդհակառակը՝ նիւթական ֆրասներ պատճառած էր Երեմիայի: Այդ պատճառաւ Երեմիա առ Ապրոյ Չէլէպի իր ուղերձին մէջ կը խնդրէ անկէ՝ հետամուտ չըլլալ գիրքերու տպագրութեան, վասնզի, կ'ըսէ, «չէ պատեհ՝ այլ դործ պիտակ» և «չէ պտուղ այդ բերունակ»: Դարձեալ՝ «Աէր իմ որտիս ո՛վ Չէլէպի . . . մի՛ հետեւիլ զայն որ ասցի, տպագրութեանն անպատեհի» (Յաւել. էջ 562 և 563):

Մեր ծրագրին համաձայն շարունակենք յայտնաբերել Երեմիայի կեանքի այն մասերը որոնք մութի մէջ մնացած են ցարդ և չեն լուսարանուած տակաւին:

Յակօր Դ. կաթողիկոս Զուղայեցի Կ. Պոլսոյ մէջ կը վախճանի 1680 Օգոստ. 1ին Կիրակի: Ղայտէրցի

(1) Լ. Ն. Ակինեան, **Չէլէպի**, էջ 182:

(2) **Սասնապօլոյ Պասմութիւն**, էջ 179:

(3) **Չէլէպի**, էջ 50: